ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 25-ին՝ Համբարձման տոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Հայաստան ժամանեց Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Լեո Մակկոնենի գլխավորած պատվիրակությունը:

Համառոտ պատմական ակնարկ Ֆինլանդիայի Եկեղեցու և նրա Առաջնորդի մասին

Քրիստոնեությունը Արևելյան Ֆինլանդիա է մուտք գործել XII դարում՝ Նովգորոդից, ուղղափառությանը հետևող վաճառականների և վանականների կողմից: Սկզբնական շրջանում ուղղափառության կենտրոնները ոչ շատ մեծ վանքերն էին, սակայն երկրորդ հազարամյակի սկզբին Լադոգայում հիմնադրվում է Վալաամի վանքը, XIV դարի վերջին՝ Կոնևեցկի մենաստանը, XVI դարում՝ Պեչենգի վանքը: Սակայն այս տարածաշրջանում սկիզբ առած պատերազմները, որոնք տևում են մոտ երկու հարյուրամյակ, պատճառ են դառնում վանքերի հիմնահատակ ավերման:

XVI դարի սկզբին Կարելիայի արևմտյան հողերը անցնում են Շվեդիայի իշխանության ներքո: Բնակչության մի մասը տեղափոխվում է Միջին Ռուսաստան, իսկ մյուս մասը մնում է Կարելիայում և դառնում լութերական: XVIII դարի սկզբին Պետրոս Մեծը գրավում է Պրիլադոժսկը, Կարելիայում նոր շրջան է սկսվում տեղի ուղղափառ Եկեղեցու համար: Լադոգայում վերականգնվում են Վալաամի և Կոնևեցի մենաստանները. XIX դարի վերջին վերականգնվում է Տրիֆոնո-Պեչենգի վանքը: Մոտավորապես նույն տարիներին հիմնադրվում է Լինտուլի Սուրբ Երրորդություն միանձնուհիների մենաստանը, որն ավելի ուշ ստանում է վանքի կարգավիճակ:

XIX դարի սկզբին ռուս-շվեդական պատերազմի ավարտին Ռուսաստանի և Շվեդիայի միջև կնքվում է Ֆրիդրիխսգամի խաղաղության պայմանագիրը, համաձայն որի՝ Ֆինլանդիայում գտնվող շվեդական հողերը անցնում են Ռուսական կայսրության տիրապետության ներքո: Արդյունքում ուղղափառ հավատացյալների թիվն այստեղ աճում է տասն անգամ: Մեծ քաղաքներում հաստատվում են ուղղափառ դավանանքի վաճառականներ, պաշտոնյաներ, ինչպես նաև զորամիավորումներ:

Ֆինլանդիայում Եկեղեցին ղեկավարում էր Սանկտ Պետերբուրգի մետրոպոլիտը: 1892 թ. հիմնադրվում է Վիբորգի և Համայն Ֆինլանդիայի թեմը: Երկրի ուղղափառ բնակչությունը այդ տարիներին կազմում էին կարելիացիները, ռուսները, ֆիններն և լոպարները:

1917 թ. ռուսական հեղափոխությունից հետո Ֆինլանդիան անկախություն է ձեռք բերում: Անկախ Ֆինլանդիայում Ուղղափառ Եկեղեցին, Լութերական Եկեղեցու հետ միասին, պետական Եկեղեցու կարգավիճակ է ստանում: 1921 թ. Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Տիխոնը (Բելավին) Ֆինն Ուղղափառ Եկեղեցուն ինքնավար Եկեղեցու կարգավիճակ է շնորհում:

Ռուսաստանում հաստատված խորհրդային իշխանությունը դժվարություններ էր ստեղծում Մոսկվայի հետ կապ պահպանելու առումով, ինչի պատճառով Եկեղեցու ղեկավարությունը դիմում է Տիեզերական Պատրիարքին՝ խնդրելով Ֆինն Ուղղափառ Եկեղեցին ընդունել Տիեզերական Պատրիարքության հովանու ներքո: 1923 թ. հուլիսի 6-ին կազմված հռչակագրի համաձայն՝ այն որպես ինքնավար արքեպիսկոպոսություն անցնում է Տիեզերական Պատրիարքի իրավասության տակ:

Մինչպատերազմական շրջանում Ուղղափառ Եկեղեցու գործունեությունը հատկապես ակտիվ էր Կարելիայում, որտեղ էին գտնվում Ֆինն Ուղղափառ Եկեղեցու ծխերի մեծ մասը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Կարելիայից էվակուացված բնակչությունը բնակեցվում է ողջ երկրի տարածքում, և այդ պատճառով նոր ծխեր են ստեղծվում: 1950 թ. ստեղծվում են 2 թեմեր՝ Կենտրոնական Ֆինլանդիայի համար Կարելիայի թեմը, իսկ Հարավային Ֆինլանդիան և Լապլանդիան, նոր բաժանման համապատասխան, կազմում են Գելսինգֆորսկի թեմը: 1979 թ. բացվում է Իոենսուի փոխանորդությունը, որի եպիսկոպոսը իր առաջնորդական պարտականություններն էր կատարում Ֆինն Եկեղեցու առաջնորդի ղեկավարությամբ: Նույն թվականին ստեղծվում է մետրոպոլիտություն: Թեմը սկսել է գործել 1980 թ. սկզբից:

ԵԿԵՂԵՑԻՆ ԱՅՍՕՐ

Ֆինն Ուղղափառ Արքեպիսկոպոսությունը ինքնավար Ուղղափառ Եկեղեցի է՝ Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքության կազմում: Եկեղեցու գրանցված հավատացյալների թիվը մոտ 60.000 է: Եկեղեցու պետն է Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Լեոն:

Ֆինն Ուղղափառ Եկեղեցին ունի երեք թեմ՝

- Կարելիայի
- Գելսինգֆորսկի (Հելսինկի)
- Ուլուի

Կարելիայի եպիսկոպոսը ողջ Եկեղեցու արքեպիսկոպոսն է: Թեմական առաջնորդները կրում են մետրոպոլիտ տիտղոսը:

Ծխական համայնքների թիվը 24 է, վանքերինը՝ 2: Եկեղեցին օգտագործում է նոր՝ Գրիգորյան օրացույց:

Եկեղեցում բարձրագույն օրենսդիր իշխանությունը տեղական և արքեպիսկոպոսական ժողովն է: Ֆինն Ուղղափառ Եկեղեցին երկրորդ պետական Եկեղեցին է Ֆինլանդիայում՝ Ավետարանական-Լութերական Եկեղեցուց հետո:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հոգևորականների պատրաստությունը տեղի է ունենում Իոենսու քաղաքի համալսարանում: Համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետում գործում է ուղղափառ աստվածաբանության բաժինը, որն ավարտելով՝ ուսանողները կարող են եկեղեցական պաշտոն ստանձնել: Համալսարանը առաջարկում է նաև ուսումնառության այլ ձևեր ուղղափառ աստվածաբանության մասնագիտությամբ:

Իոենսու քաղաքում գտնվող Հոգևոր Ճեմարանը միևնույն ժամանակ կազմակերպում է ծիսական փորձառություն ուղղափառ աստվածաբանության բաժնի ուսանողների համար և պատասխանատվություն է կրում նրանց հոգևոր պատրաստության համար: Դասավանդումը և հովվական գործունեությունը Հոգևոր Ճեմարանում իրականացվում է արքեպիսկոպոսի ղեկավարությամբ: Ճեմարանն ունի իր եկեղեցին և առանձին կացարան նրանց համար, ովքեր եկեղեցական ծառայության ճանապարհն են ընտրում:

Միակ ուղղափառ ժողովրդական համալսարանը Ֆինլանդիայի Վալաամի ժողովրդական համալսարանն է, որի դռները բաց են բոլոր նրանց առջև, ովքեր ցանկանում են սովորել այնտեղ: Ամեն տարի Վալաամի ժողովրդական համալսարանը կազմակերպում է ավելի քան 100 թեմատիկ կուրսեր:

Լուսավորության գործով զբաղվում են նաև ուղղափառ ծխերը՝ միևնույն ժամանակ կազմակերպելով մշակութային ծրագրեր և դասախոսություններ ուղղափառ հավատքի մասին՝ բոլոր հետաքրքրվողների համար: Եկեղեցու լուսավորության գործունեությանը աջակցում են նաև եկեղեցական կազմակերպությունները:

Նորին Սրբազնություն Լեո,
Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս
Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցի

Մետրոպոլիտ Լեո Մակկոնենը ծնվել է 1948 թ. հունիսի 4-ին: Նա ավարտել է Կուոպիոյի Ուղղափառ Եկեղեցու ճեմարանը 1972 թ.: Ճեմարանն ավարտելուց հետո նա իր մանկավարժական կրթությունն ստացել է Տուրկուի համալսարանում 1978 թ.: Նա ուղղափառ աստվածաբանությունից իր մագիստրոսական աստիճանը ստացել է Յոենսուի համալսարանում 1995 թ.:

Ճեմարանն ավարտելուց հետո ապագա մետրոպոլիտը ձեռնադրվում է սարկավագ, ապա 1973 թ.՝ աբեղա Հելսինկիի Հովհաննես մետրոպոլիտի ձեռամբ: 1973 թվականից նա իր ծառայությունն է մատուցում որպես հոգևորական և կրոնի ուսուցիչ նախ Ֆինլանդիայի արևելքում, ապա՝ 1974-1979 թթ. Ֆինլանդիայի հարավ-արևմտյան մասում: 1979 թ. նա ընտրվում և օծվում է Յոենսուի եպիսկոպոս, իսկ հոկտեմբերին

ընտրվում Ուլուի թեմի մետրոպոլիտ: Այս թեմը ընդգրկում է Հյուսիսային Ֆինլանդիան և Լապլանդիան: 1996 թ. ընտրվում է Հելսինկիի մետրոպոլիտ:

Իր գործունեության ընթացքում Լեո մետրոպոլիտը շատ պաշտոններ է զբաղեցրել. 1975 թվականից Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու Գլխավոր Ասամբլեայի անդամ է եղել, որն ի թիվս այլ աշխատանքների Եկեղեցու համար օրենքներ և կանոնադրություն է մշակում և եպիսկոպոսներ ընտրում: 1979 թվականին ընտրվել է եպիսկոպոսական սինոդի անդամ, իսկ 2001 թվականից հանդիսանում է սինոդի նախագահը:

1980 թվականից նա Եկեղեցու Վարչական Խորհրդի անդամ է, որը ղեկավարում է Եկեղեցու ընթացիկ գործերը թեմական եպիսկոպոսական գրասենյակների հետ համագործակցաբար: 1979-1993 թթ. Լեո մետրոպոլիտը եղել է Ս. Սերգիոսի և Հերմանի ընկերության նախագահը, որը Եկեղեցու հիմնական միսիոներական կազմակերպությունն է: Նա 1996-2001 թթ. եղել է նաև այն կոմիտեի նախագահը, որը պատասխանատու է ներքին եկեղեցական վարչական ծրագրերի զարգացման համար: 1980 թվականից նա նաև Ֆինլանդիայի Էկումենիկ Խորհրդի անդամ է, իսկ 1987-1990 թթ. եղել է այդ խորհրդի փոխնախագահը: 2004 թվականից նա □Ֆիննական Ուղղափառ Առաքելություն□ կազմակերպության նախագահն է, իսկ 2000 թվականից՝ Ortaid մարդասիրական օգնություն ցուցաբերող կազմակերպության նախագահը:

Լեո մետրոպոլիտը անդամ է բազմաթիվ հրատարակությունների խմբագրական խորհուրդների և հեղինակ է մի շարք հրատարակությունների:

2004 թ. Լեո Արքեպիսկոպոսին պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել Յոենսուի համալսարանի կողմից, իսկ 2005 թ.՝ Փարիզի Ս. Սերգիոս ինստիտուտի կողմից:

Լեո մետրոպոլիտը Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս է ընտրվել 2001 թ.: Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցին ավտոկեֆալ Եկեղեցի է Կ.Պոլսի Տիեզերական Պատրիարքության իրավասության ներքո:

Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Լեո Մակկոնենը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օդանավակայանում Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետին դիմավորեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը, Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս աբդ. Զաքարյանը:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հարկի ներքո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Լեոյին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետի եղբայրական ջերմ ընդունելությունից հետո, Մայր Աթոռի միաբանների թափորի ուղեկցությամբ և զանգերի հանդիսավոր ղողանջների ներքո Ամենայն Հայոց Հայրապետը և Լեո Արքեպիսկոպոսը շարժվեցին դեպի Մայր Տաճար:

Իջման Սուրբ Սեղանի առջև երկու Եկեղեցիների Պետերը միասնական աղոթք վերառաքեցին առ Բարձրյալն, ապա տեղի ունեցավ բարիգալստյան մաղթանքների փոխանակում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անունից Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետին ողջունեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Սրբազան Հայրն իր խոսքում ներկայացրեց Մայր Աթոռի՝ Միածնի էջքով հիմնադրման պատմությունը, հայ ժողովրդի կյանքում ունեցած բացառիկ առաքելությանը՝ շեշտելով նաև, որ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետի այցը Մայր Աթոռ համընկավ Տիրոջ Համբարձման տոնախմբմանը և Հայ Եկեղեցու համար նվիրական ազգային տոնին՝ 1441 թ. Հայոց Հայրապետական Աթոռի Սսից փոխադրման և Սուրբ Էջմիածնում վերահաստատման հիշատակի օրվան:

Նորին Սրբությանը, միաբաններին և ներկա բարեպաշտ ժողովրդին իր խոսքն ուղղեց նաև Լեո Արքեպիսկոպոսը. «Սիրտս լի է ուրախությամբ, որ Աստծո օգնությամբ և Ձերդ Սրբության հրավերով հնարավորություն ունեցա այցելել ձեր այս շատ գեղեցիկ, անկախ և հնագույն քրիստոնյա երկիրը: Առանձնահատուկ երախտագիտության և ցնծության զգացումներով է, որ այցելում եմ այս երկիր, որն առաջինն էր աշխարհում, որ քրիստոնեությունն ընդունեց որպես ազգային կրոն, մի երկիր, որտեղ առաքելական հաջորդականությունը պարզապես Եկեղեցու դավանաբանության և քահանայության հարց չէ, այլ ուղղակիորեն առնչվում է այն փաստին, որ Եկեղեցու հիմնադիրները եղել են առաքյալներից երկուսը: Ուրախ եմ, որ ինձ հնարավորություն է ընձեռնվել քայլելու Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի հետքերով:

1700 տարիներ ի վեր առաքելական ուղղափառ հավատքը անբաժանելի մասն է եղել ձեր ժողովրդի կյանքի և յուրահատուկ մշակույթի, իսկ քրիստոնեությունն ու Սուրբ Եկեղեցին եղել են կապ, հույսի աղբյուր և զորություն բոլոր հայերի համար՝ անկախ նրանից, թե ապրում են նրանք այս երկրում, թե արտասահմանում: Մեր պատմության դասագրքերից գիտենք, թե այս երկիրն ինչ տառապանքներ է կրել՝ պաշտպանելու քրիստոնեական հավատքը, և թե ինչ վճռական պայքար է մղել՝ հաճախ մեծ զոհերի գնով, այստեղ՝ Արևելքում պահպանելու քրիստոնեության ամրոցը: Դուք անսասանորեն գոյատևել եք և պահպանել ձեր հավատքը ի հեճուկս հարևան ժողովուրդների ճնշումների և անաստվածության լծի, որով ձեր Եկեղեցին է հիանալի օրինակ հանդիսանում ամբողջ քրիստոնյա աշխարհի համար»,- ասաց Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետն՝ իր խոսքում անդրադառնալով նաև Ֆինլանդիայում Ուղղափառ Եկեղեցու կյանքին:

Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոսը վերհիշեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա 2004 թվականի հունիսին, որն առաջին քայլը դարձավ երկու Եկեղեցիների միջև հարաբերությունների հաստատման համար:

Ապա Լեո Արքեպիսկոպոսին և պատվիրակության անդամներին բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետը. «...Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ այս առիթն է ընձեռել միասնաբար գտնվելու մեր հավատքի նվիրական կենտրոնի՝ Սուրբ Էջմիածնի Իջման Սուրբ Սեղանի առջև և համատեղ աղոթք առաքել առ Աստված մեր ժողովուրդների ապահով ու բարօր կյանքի և աշխարհի խաղաղության համար, ժողովուրդների եղբայրության և պետությունների համագործակցության համար: ...Բազում Եկեղեցիների հոգևոր պետեր դարերի ընթացքին այս Սուրբ Սեղանի առջև իրենց աղոթքն են առ Աստված բարձրացրել: Մենք հավատում ենք, որ համատեղ մեր աղոթքները գալիս են առավել զորացնելու եղբայրությունը ազգերի, եղբայրական սերը երկու Եկեղեցիների՝ մերձեցնելով նրանց իրենց առաքելության մեջ, որ ուղենշված է մեր Երկնավոր Տիրոջ կողմից:

Խորհրդանշական է Ձեր ներկայությունը այսօր Մայր Տաճարում, որը Տիրոջ երկրավոր կյանքից երկու հազար տարիներ հետո գալիս է վկայելու, որ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հետևորդները՝ սպասավորներ և հավատացյալներ, շարունակում են հավատարիմ մնալ Տիրոջ սիրո նվիրական պատգամին: Եվ մենք այս պահին աղոթք ենք երկինք բարձրացնում, որ այս սերը լինի անսասան մեր Եկեղեցիների մեջ, Քրիստոսի Սուրբ Եկեղեցու մեջ, այդ սերը առաջնորդի մեզ մեր ծառայության մեջ»,- նշեց Նորին Սրբությունը՝ հայցելով Տիրոջ սերը, շնորհը և ողորմությունը Ֆինլանդիայի ժողովրդին, պետությանը և Ֆինլանդիայի մեջ գործող Եկեղեցիներին:

Արարողությունից հետո Ամենայն Հայոց Հովվապետը և Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետը մասնակցեցին Սուրբ Պատարագի արարողությանը:

Պատարագի Սրբազան արարողությունից հետո հյուրերը այցելեցին նաև Մայր Աթոռի թանգարաններ:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը և Լեո Արքեպիսկոպոսը այցելեցին Ս. Գեղարդ վանք, որտեղ ունկնդրեցին «Ս. Գեղարդա Վանքի» երգչախմբի համերգը, ապա մասնակցեցին ի պատիվ հյուրերի Ս. Գեղարդա վանքի վանահայր Հոգեշնորհ Տ. Ղևոնդ աբեղա Ղևոնդյանի հյուրասիրությանը:

Նորին Ամենապատվությունը եղավ նաև հոգևոր-կրթական հաստատություններում՝ մայիսի 25-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, իսկ մայիսի 27-ին՝ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

Ապագա հոգևորականների առջև Լեո Արքեպիսկոպոսը ներկայացրեց հոգևորականի մերօրյա առաքելության իր ըմբռնումը: Խոսեց նաև Ֆինլանդական Եկեղեցու համապատասխան հաստատությունների գործունեության և ապագա ծրագրերի մասին՝ կապված այդ համակարգի հետ:

Մայիսի 26-ին Ֆինլանդիայի Արքեպիսկոպոսը այցելեց Հայոց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք մատուցեց Ցեղասպանության բյուր նահատակաց:

Նույն օրը Լեո Արքեպիսկոպոսը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հետ հանդիպեց ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ. 28 ՄԱՅԻՍԻ

ՍԵՎԱՆԱ ՎԱՆՔՈՒՄ



ՍԵՎԱՆԱ ՎԱՆՔՈՒՄ.
ԴԵՄ ՀԱՆԴԻՄԱՆ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻՆ

Նախագահի հետ կայացած հանդիպումից հետո հյուրերը եղան Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

Երեկոյան Նորին Սրբության նախագահությամբ Ֆինլանդիայի Արքեպիսկոպոսն այցելեց նաև Հայորդյաց տներ և ծանոթացավ այստեղ հաճախող տաղանդաշատ երեխաների հետ: Հայորդյաց տան երեխաները հանդես եկան հոգևոր և ազգագրական երգերի կատարմամբ:

Մայիսի 27-ին հյուրերը այցելեցին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, որտեղ Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը ներկայացրեց հայ ժողովրդի պատմա-մշակութային և հոգևոր մատենագրության հարուստ ու բազմաժանր ժառանգությունը:

Նույն օրը հյուրերը եղան նաև Ս. Խոր Վիրապում, իսկ երեկոյան Վեհափառ Հայրապետի հետ մասնակցեցին Հայաստանի Հանրապետությունում Ֆինլանդիայի արտակարգ և լիազոր դեսպան տիկին Թերհի Հակալայի կողմից տրված պատվո ընթրիքին:

Կիրակի օրը, մայիսի 28-ին, Նորին Ամենապատվություն Լեո Արքեպիսկոպոսը և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեցին Սարդարապատ, որտեղ մասնակցեցին Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման տարեդարձի առիթով իրականացված միջոցառումներին, այնուհետև վերադարձան Մայր Աթոռ և մասնակցեցին Պատարագի Սրբազան արարողությանը:

Մայիսի 28-ին Մայր Աթոռի միաբանական սեղանատանը, ի պատիվ մեծարգո հյուրերի, կազմակերպվեց ողջերթի ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանները:

Երեկոյան Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Լեո Մակկոնենը և նրա գլխավորած պատվիրակությունը լավագույն տպավորություններով մեկնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և Հայաստանի Հանրապետությունից:

Տ. ՀՈՎԱԿԻՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ